

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՅՈԳԵՒՐ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

Չորեքշաբթի, 8 Փետրուարի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Յոգեւոր Եղբայրակցութիւնը ներկայացնող պատուիրակութեան մը: Ներկայ էր նաեւ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան վարիչներէն Յոգչ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Հանդիպումը տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի առժամեայ գրասենեակին մէջ, Էնսինօ: Պատուիրակութիւնը եկած էր ամանորի առիթով իր բարեմաղթութիւնները յայտնելու Առաջնորդ Սրբազանին: Տեսակցութեան ընթացքին, խորհրդակցութեան նիւթ եղան Եղբայրակցութեան գործունէութիւնն ու ծրագիրները, որոնց մասին ներկայացուցիչները խնդրեցին Առաջնորդ Սրբազանին ցուցմունքներն ու թելադրանքները:

**PRELATE WELCOMED A DELEGATION FROM THE ARMENIAN
ECCLESIASTICAL BROTHERHOOD**

On Wednesday, February 8, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed a delegation representing the Armenian Ecclesiastical Brotherhood at the Prelacy's temporary offices in Encino. Also present was Very Rev. Fr. Barthev Gulumian, co-director of the Prelacy Christian Education Department.

The delegation had come to express their best wishes to the Prelate on the occasion of the New Year. During the meeting, the Brotherhood's activities and programs were discussed, for which the representatives requested the Prelate's guidance and suggestions.